ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԱԴՐՎՈՂ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

16 մարտի, 2024 թ.

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավորի պաշտոնում Հայաստանի Հանրապետության կողմից առաջադրվող թեկնածուների ընտրության հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը գումարվեց 2024 թվականի մարտի 16-ին՝ ժամը 11:00-ին, ՀՀ վճռաբեկ դատարանի վարչական շենքում: Նիստը վարում էր Հանձնաժողովի նախագահ, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանը:

ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ՝

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի նախագահ	Լիլիթ Թադևոսյանը
Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական խորհրդի անդամ	Հայկ Գրիգորյանը
Հայաստանի Հանրապետության նախագահի աշխատակազմի ղեկավարի տեղակալ	Խաչատուր Պողոսյանը
Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազ	Աննա Վարդապետյանը
Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպան	Անահիտ Մանասյանը
Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի տեղակալ	Պարույր Հովհաննիսյանը
Հայաստանի Հանրապետության փաստաբանների	Սիմոն Բաբայանը

պալատի նախագահ	
Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ	Ռուստամ Բաքոյանը
«Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի» նախագահ	Արթուր Սաքունցը

Նիստն արձանագրում էր ՀՀ վարչապետի աշխատակազմի արձանագրային բաժնի ավագ մասնագետ Սերգեյ Հովհաննիսյանը:

Ա. Դիլանյանը Հանձնաժողովի հաստատմանը ներկայացրեց նիստի օրակարգային հարցը:

Հանձնաժողովը միաձայն հավանություն տվեց նիստի օրակարգին:

ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

Օրակարգային հարց՝ քննարկվեց փաստաթղթային ստուգման արդյունքներով ընտրության հարցազրույցի փուլ անցած հավակնորդների ցուցակը, հարցազրույցի անցկացման օրը, ժամը, վայրը հաստատելու, զանգվածային լրատվության միջոցներին և հասարակական կազմակերպություններին հարցազրույցին մասնակցելու ընթացակարգը և պայմանները սահմանող ծանուցում հասցեագրելու հարցը:

Հանձնաժողովը քննարկեց յուրաքանչյուր հավակնորդի ներակայացրած փաստաթղթային փաթեթը և հավակնորդներից յուրաքանչյուրի վերաբերյալ պետական իրավասու մարմիններից ստացված տեղեկատվությունը:

Փաստաթղթային ստուգման արդյունքներով որոշում կայացնելու տեսանկյունից Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության էական համարվող գրավոր պատասխանը մինչև համապատասխան որոշման կայացումը ստանալու և քննարկելու նպատակով նիստը շարունակվեց սույն թվականի մարտի 19-ին՝ ժամը 17:00-ին, տեսակապի միջոցով:

Հանձնաժողովը միաձայն որոշեց՝

1. հաստատել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավորի պաշտոնում Հայաստանի Հանրապետության կողմից առաջադրվող թեկնածուների՝ փաստաթղթային ստուգման արդյունքներով ընտրության հարցազրույցի փուլ անցած հավակնորդների ցուցակը հետևյալ կազմով.
   1) Ալումյան Հայկ

2) Գրիգորյան Լիզա
3) Գրիգորյան Վահե
4) Կարապետյան Նորա
5) Մազմանյան Արմեն
6) Մարգարյան Աննա
7) Քոչարյան Վիգեն

2. հարցազրույցն անցկացնել 2024 թվականի ապրիլի 4-ին՝ ժամը 14:00-ից, և ապրիլի 5-ին՝ ժամը 10:00-ից, Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի վարչական շենքում.
3. զանգվածային լրատվության միջոցի և հասարակական կազմակերպության մինչև 2 ներկայացուցիչներ կարող են ներկա գտնվել ընտրության հարցազրույցի փուլին, եթե հարցազրույցի օրվանից առնվազն 2 աշխատանքային օր առաջ (ս.թ. ապրիլի 1-ը ներառյալ) ներկայացրել են համապատասխան դիմում Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ՝ candidate.echr@gov.am էլ. փոստին (դիմումի մեջ անհրաժեշտ է նշել զանգվածային լրատվության միջոցի և հասարակական կազմակերպության համապատասխան ներկայացուցիչների անունները և ազգանունները, անհրաժեշտ է ներկայանալ անձը հաստատող փաստաթղթով):

Հանձնաժողովի նախագահ Ա. Դիլանյանի առաջարկությամբ յուրաքանչյուր հավակնորդի վերաբերյալ Հանձնաժողովի նամակների արդյունքում պետական մարմինների տրամադրած փաստաթղթերը նախապես՝ հավակնորդներին հարցազրույցի իրենց անհատական ժամերի մասին ծանուցելու հետ միասին, կներկայացվեն համապատասխան հավակնորդներին:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ՝

Նիստը վարող՝ **Արման Դիլանյան** **[ստորագրված]**

Լիլիթ Թադևոսյան	**[ստորագրված]**
Հայկ Գրիգորյան	**[ստորագրված]**
Խաչատուր Պողոսյան	**[ստորագրված]**
Աննա Վարդապետյան (16.03.2024)	**[ստորագրված]**
Անահիտ Մանասյան	**[ստորագրված]**
Գրիգոր Մինասյան (19.03.2024)	**[ստորագրված]**
Պարույր Հովհաննիսյան (16.03.2024)	**[ստորագրված]**
Սիմոն Բաբայան (16.03.2024)	**[ստորագրված]**
Ռուստամ Բաքոյան	**[ստորագրված]**
Արթուր Սաքունց	**[ստորագրված]**
Արձանագրող՝ Սերգեյ Հովհաննիսյան	**[ստորագրված]**